5476

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«13» 05 2025թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 123-25

Նախաձեռնող՝ ***« Հայնախագիծ » ԲԲԸ***
Ք.Երևան, Չարենցի փողոց, 1

Գործունեությունը՝ ***Բերդ համայնքի Նավուր բնակավայրում միջնակարգ դպրոցի կառուցում***
Տավուշի մարզ

Առդիր՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

ԲՓ № 123-25

«13» 05 2025թ.

Նավուր բնակավայրում միջնակարգ դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«Հայնախագիծ» ԲԲԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն /այսուհետ՝ ՇՄԱԳ/, նախագիծ
Գործունեության կատեգորիա՝	«Բ» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Տավուշի մարզ, Բերդ համայնքի Նավուր բնակավայր

Ներածական մաս. Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի պատվերով իրականացվող «Մինչև 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերակառուցվող 300 դպրոցների» ծրագրի շրջանակներում Տավուշի մարզի Նավուր բնակավայրում նախատեսվում է միջնակարգ դպրոցի /այսուհետ՝ դպրոց/ կառուցման աշխատանքներ:

Գործունեությունն իրականացվելու է անշարժ գույքի նկատմամբ անհատույց օգտագործման իրավունքի գրանցման վկայականով ամրագրված՝ 3.2 հա մակերեսով հողամասում, որի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի, 8-րդ կետի համաձայն՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Բ կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Միջնակարգ դպրոցը կառուցվելու է քանդման ենթակա 1394.5 մ² մակերեսով հին դպրոցով և 1087.58 մ² ընդհանուր մակերեսով տարբեր շինություններով ծանրաբեռնված հողամասի սահմաններում, որտեղ առկա են հատման ենթակա 30 ծառ: Տարածքի հարևանությամբ առկա են կառույցներ, ամենամոտ բնակելի տան հեռավորությունը կազմում է 18 մ: Ռելիեֆի բացարձակ նիշերը տեղամասում տատանվում են 1500-1508 մմ սահմաններում:

Հիդրոերկրաբանական տեսակետից մինչև 10 մետր խորությամբ ստորգետնյա ջրեր չեն բացահայտվել:

Նախատեսվող գործունեության տարածքում բացակայում են բնության հատուկ պահպանվող տարածքները, պատմամշակութային հուշարձանները, բնության հուշարձանները, ինչպես նաև զգայուն էկոհամակարգերը, բույսերի և կենդանիների

02543163 ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ CONCLUSION OF EXPERTS

հազվագյուտ և Կարմիր գրքային տեսակները: Հողի բերրի շերտ հզորությունը կազմում է 0.3-0.4 մ:

Կառուցապատման տեխնիկատնտեսական ցուցանիշներն են՝

- հողատարածքի ընդհանուր մակերեսը՝ 31999,70 մ²,
- կառուցապատման ընդհանուր մակերեսը՝ 6911.24 մ²,
- կանաչապատման ընդհանուր մակերեսը՝ 25088.46 մ²,
- անջրանցիկ ընդհանուր մակերեսը՝ 3853.4 մ²:

Համաձայն նախագծի նախատեսված է սեյսմիկ կարով բաժանված 3 մասնաշենքով երկհարկանի դպրոց միչև 244 աշակերտի ուսումնական ծրագրերի դասընթացների կազմակերպման նպատակով:

Դպրոցի նախագծային լուծումներում ներառվել են դպրոցի տարրական, միջին և ավագ դպրոցների հոսքերը՝ 12 դասարան 12 աշակերտով և 4 դասարան 20 աշակերտով: Նախատեսված են դասասենյակներ տարբեր առարկաների և լեզուների ուսուցման նպատակով, ինչպես նաև ռազմագիտության, ռոբոտատեխնիկայի կաբինետներ, սպորտային և բազմաֆունկցիոնալ դահլիճներ, տնօրենի և ուսումնական մասի ղեկավարի սենյակներ, ուսուցչանոց, բժշկի սենյակ, գրադարան նոր կաթսայատունը, բացօթյա մարզահրապարակը և խաղահրապարակը: Դպրոցու ունենալու է նկուղային հարկը, ինչը կարող է ծառայել որպես ժամանակավոր թաքստոց, որտեղ բացի նկուղային սրահ-տարածքից տեղակայված են սանհանգույց և օժանդակ սենքեր: Դպրոցի սպորտային հրապարակները լինելու են ռետինե ծածկույթով: Տանիքը լինելու է մուգ մոխրագույն բիտումային կղմինդրից է, կազմակերպված ջրահեռացմամբ:

Համաձայն ՀՀՇՆ IV-11.07.01-2006 շինարարական նորմերի՝ միջնակարգ դպրոցն ապահովված է լինելու թեքահարթակներով, նախատեսված է հաշմանդամություն ունեցող երեխաների անհատական պարապմունքների սենյակ, սանհանգույց և այլ միջոցառումներ հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի ազատ տեղաշարժման համար: Միջնակարգ դպրոցի մուտքը կահավորված է լինելու տարածքի վերաբերյալ հաշմանդամների համար մատչելի տեղեկատվության տարրերով:

Նախագծով դպրոցի բակում նախատեսվում է տեղադրել 150 կՎտ հզորությամբ արևային ֆոտովոլտային համակարգ՝ կազմված 272 հատ ֆոտովոլտային (ՖՎ) վահանակներ: Շենքի էլեկտրամատակարարումը և դպրոցի էլեկտրաէներգիայի հաշվառումն իրականացվելու է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի հետ փոխադարձ համաձայնության սկզբունքով՝ դարձափոխիչային էլեկտրոնային երկսակագնային էլեկտրական հաշվիչի միջոցով, եռաֆազ սնուցմամբ: Արևային պանելների տեղադրումն իրականացվելու է համապատասխան սերտիֆիկատ ունեցող ընկերությունների կողմից, որոնց կողմից իրականացվելու է նաև հետագա սպասարկման և շարքից դուրս եկած վահանակների խոտանման աշխատանքները:

Դպրոցի ջեռուցման համար նախատեսված է ավտոմատացված ջրային երկու էլեկտրակաթսա՝ յուրաքանչյուրը 120կՎտ հզորությամբ, իսկ նկուղային հարկի ջեռուցման համար՝ էլեկտրական յուղային ռադիատորներ:

Նոր դպրոցը կառուցվելու է գործող դպրոցի տարածքում, որտեղ առկա են ինժեներական բոլոր անհրաժեշտ ենթակառուցվածքները, նոր տեխնիկական պայմանների ձեռք բերման անհրաժեշտություն չի առաջանում և միացումներն իրականացվելու են արդեն իսկ գոյություն ունեցող համակարգերին:

Համաձայն հաշվետվության՝ շինարարական աշխատանքների ընթացքում օգտագործվելու են շինարարական մեքենաներ և մեխանիզմներ, այդ թվում՝ ավտոկռունկ, էքսկավատոր, ավտոինքնաթափ և այլն:

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS

Շինարարական նյութերից օգտագործվելու են երկաթբետոն, երկաթբետոնե կարկասներ, մետաղական կառուցվածքներ, ամրան, ավազ, ապակի, ջերմամեկուսիչ նյութեր և այլն: Հողային ռեսուրսների պահպանության նպատակով շինարարական տեխնիկայի և սարքավորումների կայանման վայրերում նախատեսվում է ավազի կամ մանրախճի փռում՝ վառելիքի կամ քսայուղերի հնարավոր արտահոսքը կանխելու նպատակով: Շինհրապարակում բետոնի շաղախի պատրաստման հանգույց չի նախատեսվում: Բետոնը և շաղախը մատակարարվելու են մոտակա բետոնաշաղախային հանգույցից՝ մասնագիտացված տրանսպորտային միջոցներով:

Շինարարության ժամանակ բնառեսուրսներից ջուրն օգտագործվելու է աշխատանքային հարթակի ջրցանի, հանված գրունտի խոնավացման, տրանսպորտային միջոցների անիվների լվացման, ինչպես նաև շինարարական անձնակազմի խմելու և կենցաղային նպատակների համար: Ընդամենը ջրօգտագործումը կկազմի 7047.12 մ^3/շին.ժամ: Ջրցանի և անիվների լվացման համար նախատեսվող տեխնիկական ջուրը բերվելու է ավտոցիստեռնով՝ պայմանագրային հիմունքներով: Աշխատողների կենցաղային նպատակների համար ջուրը վերցվելու է գոյություն ունեցող դպրոցի ջրագիծից: Աշխատողներն օգտվելու են տարածքում տեղադրվող բիոզուգարանից, որտեղ կուղղորդվեն նաև անիվների լվացման ջրերը: Բիոզուգարանի մաքրումը կատարվելու է ըստ լցվածության, մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Գործունեության ընթացքում բացառությամբ մեկ մասնաշենքից, ապամոնտաժվելու է հին դպրոցը: Քանդման աշխատանքները իրականացվելու են մեխանիկական եղանակով: Ապամոնտաժվելու են բոլոր շինությունները: Քանդման արդյունքում առաջացող թափոնները տարանջատվելու են և կուտակվելու են առանձին: Օգտագործման համար պիտանի թափոնները տեսակավորվելու են, հանձնվելու են համապատասխան մասնագիտական կազմակերպություններին կամ տեղափոխվելու են աղբավայր:

Շինարարական աշխատանքների ընթացքում ե/բ հիմքերի տեղադրման համար կատարվելու է հողային զանգվածի հանույթ, որից մի մասը կօգտագործվի հետլիցքի համար, իսկ ավելացած հողային զանգվածը, ինչպես նաև շինարարական և քանդման աշխատանքներից գոյացած շին աղբը կհեռացվի օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Բերդի համայնքապետարանի հետ համաձայնեցված վայրում: Կենցաղային աղբը կտեղափոխվի աղբահավաք ծառայություն իրականացնող ընկերության կողմից՝ պայմանագրային հիմունքներով, շինարարական աշխատանքների իրականացման և շահագործման ընթացքում:

Շինարարական հրապարակի սահմաններից դուրս կեղտաջրերի թափանցումը կանխարգելելու և ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվում է շինարարական հրապարակին կից տեղադրել պարզարան, որտեղ կուղղորդվեն անձրևաջրերը և բետոնաջրերը: Պարզարանի պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանի համար, իսկ փոքր քանակներով տիղմն, ինչն իրենից ներկայացնում է հողի, ավազի և այլ մնացորդային նստվածք, մնացած շին. աղբի հետ կտեղափոխվի աղբավայր:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքի բարեկարգում և կանաչապատում: Կանաչապատման աշխատանքները կիրականացվեն համաձայն Բերդի համայնքապետարանի կողմից հաստատված կանաչապատման նախագծի: Նախատեսվում է տնկել 361 ծառ՝ սրատերև թղկենի, գնդաձև իլենի, սյունաձև թույա, սրծաթափայլ բարդի:

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ОЦЕНКИ ВОЗДЕЙСТВИЯ НА ОКРУЖАЮЩУЮ СРЕДУ
ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTER
02543163
ՓՈՐՁԱՔՆՆԻՉՆԵՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТНОЙ КОМИССИИ
COMMISSION OF EXPERTS

Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցության ռիսկեր նվազեցման նպատակով ՇՄԱԳ-ում նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են **միջոցառումների ծրագրում և մոնիթորինգի պլանում: Այդ թվում՝**

- մթնոլորտային օդ աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների քանակական պարամետրերի չափումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ,
- փոշենստեցման նպատակով տարածքի ջրցանում՝ շոգ և չոր եղանակներին օրեկան 2-3 անգամ հաճախականությամբ,
- օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ
- աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ,
- կենսաբազմազանության մշտադիտարկումներ:

Պատճառաբանական եզրահանգումներ. Տավուշի մարզի Նավուր բնակավայրում միջնակարգ դպրոցը կառուցվելու և շահագործվելու է ՀՀ-ում գործող օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան: Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցությունները լինելու են շինարարության փուլում և կրելու են ժամանակավոր բնույթ:

Շահագործման ընթացքում շենքի կանաչ տարածքների և նորատունկ բուսականության խնամքը կիրականացվի դպրոցի կողմից, ինչը կներառի նաև նորատունկ կանաչ գոտու վիճակի մշտադիտարկումները, որի ընթացքում կպչողականություն չապահովող ծառատեսակները կփոխարինվեն նորերով:

Փորձաքննական գործընթացին ներգրավվել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, Տավուշի մարզպետարանը, Բերդի համայնքապետարանը, շահագրգիռ հանրությունը:

Փորձաքննական գործընթացում կատարվել է հաշվետվության լրամշակում, որտեղ հաշվի են առնվել ներկայացված առաջարկություններն ու դիտողությունները:

Օրենսդրությամբ սահմանված կարգով՝ գնահատման և փորձաքննության ընթացքում Նավուր բնակավայրում իրականացվել են հանրային լսումներ, ինչի ընթացքում հանրությունը դրական է արտահայտվել նախատեսվող գործունեության վերաբերյալ:

Փորձաքննական պահանջներ

- Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում խստորեն հետևել «Մթնոլորտային օդի պահպանության մասին», «Թափոնների մասին» օրենքների պահանջները, ինչպես նաև գործունեությանն առնչվող շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջներին:
- Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում պահպանել արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության նորմերը և պահանջները:
- Ապահովել կանաչ տարածքների խնամքը:
- Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է հետևել գնահատման հաշվետվությամբ ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, ժամանակացույցին, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ բնապահպանական նորմերի պահպանման նպատակով:

02543163 ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Հայնախագիծ» ԲԲԸ - ի կողմից ներկայացված Տավուշի մարզի Բերդ համայնքի Նավուր բնակավայրում միջնակարգ կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական պետական փորձաքննական եզրակացություն՝ փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի
ժամանակավոր պաշտոնակատար՝ Սևակ Մարկոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝ Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
առաջատար մասնագետ՝ Ռուզան Մակինյան